ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՁՀ-ՊԸԾՁԲ-16/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Քաղ. Երևան «06» դեկտեմբերի 2016թ.

2016թ-ի դեկտեմբերի 06-ին՝ ժամը 11:00-ին, Հայաստանի զարգացման հիմնադրամի գրասենյակում՝ ՀՀ, ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 հասցեում, տեղի ունեցավ ՀՁՀ-ՊԸԾՁԲ-16/4 ծածկագրով պարզեցված ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Լիլիթ	Գինոսյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի իրավաբան.
Վարդգես	Եղիազարյան	Հայաստանի զարգացման հիմնադրամի զբոսաշրջային ծառայությունների մատուցողների աջակցության բաժնի մասնագետի ժ/պ.

Հանձնաժողովի նիստին ներկա էր՝

Անի	Բազեյանը	Հայաստանի զարգացման հիմնադրամի գործերի կառավարման բաժնի գլխավոր իրավաբան-բաժնի ղեկավար:

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի երկու անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Լիլիթ Գինոսյանը, իսկ քարտուղարն էր՝ Անի Բազեյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/4 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ ներկայացրած անձի/անց/, վերջինիս/ներիս/ կողմից ներկայացված հայտի/երի/ գնահատման և առաջարկված գնի/երի/ մասին:
2. Առաջին /և հաջորդաբար տեղեր/ զբաղեցրած մասնակից/ներ/ որոշելու մասին:
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա և ժամի մասին:

1. ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏ/ԵՐ/ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱՆՁԻ/ԱՆՑ/, ՎԵՐՋԻՆԻՍ/ՆԵՐԻՍ/ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ/ԵՐԻ/ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ԳՆԻ/ԵՐԻ/ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահ Լիլիթ Գինոսյանը նշեց, որ գնման առարկայի 1-ին չափաբաժնի ընդհանուր (նախահաշվային) գինը կազմում է 6 200 000 ՀՀ դրամ:

Հանձնաժողովի քարտուղար Անի Բազեյանը հայտնեց, որ՝

- ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/4 ծածկագրով պարզեցված ընթացակարգին մասնակցելու հայտ/եր/ է/են/ ներկայացրել հետևյալ անձը/իք/ (այսուհետ՝ նաև մասնակիցը/ները/).

Հ/հ	Մասնակցի անվանում	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԱՎՐՈՐԱ ԲԱՐԵԱԼԻՍ» ՍՊԸ	ՀՀ ք. Երևան 0002, Սարյան 6-4
2.	«ԲՐՈՒՍ» ՍՊԸ	ՀՀ, ք. Նոր Հաճն, գետամեջի խաչմերուկ
3.	«ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՍՔՈՒԼ ՕՖ ՄԱԹՔԵԹԻՆԳ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Ծխախոտագործների 91/1
4.	«ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 15/82

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Մասնակիցը/ները/ հայտը/երը/ պարունակող ծրարը/ները/ կազմել և ներկայացրել է/են/ ՀՋՀ-ՊԸԾՁԲ-16/4 ծածկագրով պարզեցված ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) հրավերի (այսուհետ՝ հրավեր) պահանջներին համապատասխան, բացառությամբ «ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՍՔՈՒԼ ՕՖ ՄԱԹՔԵԹԻՆԳ» ՍՊԸ-ի, որի կողմից ներկայացված ծրարը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ պահպանված չէ հրավերի 2-րդ մասի 5.1 կետով սահմանված պահանջը, այն է՝ ծրարի վրա բացակայում է հայտը ներկայացնող անձի կամ վերջինիս լիազորված անձի ստորագրությունը:

- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, բացառությամբ «ԲՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի, մասնավորապես պահպանված չէ հրավերի 2-րդ մասի 5.1 կետով սահմանված պահանջը, այն է՝ ծրարում ներառված փաստաթղթերի պատճենների քանակը պակաս է ներկայացված հրավերով սահմանված քանակից:

- Մասնակցի/ների/ կողմից ներկայացված հայտում/երում/ ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին.

- Մասնակիցը/ները/ ներկայացրել է/են/ հետևյալ գինը/երը/՝ առանց ԱԱՀ.

Չափա-բաժնի համարը	Մասնակցի/ների/ անվանումը/ները/	Ծառայության անվանումը և առաջարկած գինը/երը/՝ (ՀՀ դրամ)
		Առաջմղման ծառայություններ
1.	«ԱՎՐՈՐԱ ԲԱՐԵԱԼԻՍ» ՍՊԸ	6 170 000
2.	«ԲՐՈՒՍ» ՍՊԸ	5 889 000
3.	«ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՍՊԸ	5 400 000

Որոշվեց՝

1. Լիլիթ Գինոսյանի և Անի Բազեյանի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. «ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ ՍՔՈՒԼ ՕՖ ՄԱԹՔԵԹԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և վերադարձնել հայտը ներկայացնողին:

3. «ԲՐՈՒՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել:

4. «ԱՎՐՈՐԱ ԲԱՐԵԱԼԻՍ» և «ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ընկերությունների կողմից ներկայացված հայտը/երը/ գնահատել բավարար:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

2. ԱՌԱՋԻՆ /ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ՏԵՂԵՐ/ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ/ՆԵՐ/ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետով՝

Որոշվեց՝

1. Որպես ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով 1-ին և 2-րդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ հայտարարել համապատասխանաբար «ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» և «ԱՎՐՈՐԱ ԲԱՐԵԱԼԻՍ» ընկերություններին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

3. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՋՈՐԴ ՆԻՍՏԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՕՐՎԱ ԵՎ ԺԱՄԻ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

Հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի N 168-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 49-րդ կետով սահմանված փաստաթղթերը հանձնաժողովի

քարտուղարի կողմից հանձնաժողովի անդամներին տրամադրվելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:00-ին:

Կողմ՝ 2
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Գինոսյան _____

Հանձնաժողովի անդամ՝

Վ. Եղիազարյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Ա. Բազեյան _____